ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ
ՎԱՆԱՁՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ
HELSINKI CITIZENS' ASSEMBLY
VANADZOR OFFICE

2001 Հայաստանի Հանրապետություն,
Վանաձոր Տիգրան Մեծի պողոտա 59
59 Tigran Metsi st.
Vanadzor, 2001, Republic of Armenia
Tel. (հեռ.) (374 322) 4 22 68
Fax (ֆաքս) (374 322) 4 12 36
E-mail: hcav@hcav.am

Ե/2012- 26.10/380
26.10.2012 թ.

ՀՀ գլխավոր դատախազ
Աղվան Հովսեփյանին

Հարգելի պարոն Հովսեփյան

2012թ. հոկտեմբերի 20-ին «168 ժամ» թերթի էլեկտրոնային կայքէջում հրապարակվել է «Պատվիրատուն Կարեն Ավագյանն է» վերնագրով նյութ:

Նյութի հեղինակ Մարինե Բոզոյանը լրատվական միջոցի թղթակցին հայտնել է, որ իր ամուսնուն փուչիկների լիցքավորելու պատվեր տվել է ՀՀԿ-ական պատգամավոր Կարեն Ավագյանը:

Լրագրողի հարցին, թե այսինքն՝ պատվիրատուն ցանկացել է, որ Ս. Բոզոյանը մեթանո՞վ լիցքավորի փուչիկները, Մ. Բոզոյանը պատասխանել է. «Այո, որպեսզի գումարը քիչ լինի, որովհետև հելիումովը թանկ է»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով այն հանգամանքը, որ 2012թ. հոկտեմբերի 20-ին «168 ժամ» թերթի էլեկտրոնային կայքէջում հրապարակված նյութում Մ. Բոզոյանը հայտնել է մեթան գազով փուչիկները լիցքավորելու պատվեր տվող պատվիրատուի անուն ազգանունը, որը ողբերգական բնույթ է կրել, դիմում եմ Ձեզ, քրեական գործ հարուցելու և համապատասխան պատասխանատվության ենթարկելու Կարեն Ավագյանին:

Կից ներկայացնում եմ՝ 2012թ. հոկտեմբերի 20-ին «168 ժամ» թերթի էլեկտրոնային կայքէջում հրապարակված նյութը:

Հարգանքներով
կազմակերպության նախագահ՝ Արթուր Սաքունց

Կատարող՝ Ա. Ջալյան
azalyan@hcav.am

Պատվիրատուն Կարեն Ավագյանն է

ՄԱՐԻՆԵ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ | 13:04 Հոկտեմբեր 20, 2012



«Փուչիկների գործով» մեղադրյալ Սերոբ Բոզոյանի կինը՝ Մարինե Բոզոյանը, մեր թղթակցի հետ զրույցում ասել է, որ իր ամուսնուն փուչիկների պատվեր տվել է ՀՀԿ-ական պատգամավոր Կարեն Ավագյանը:

«7000 փուչիկ էր: Ինքը 7000 փուչիկ չէր կարող մենակ փչել ու կապել: Ինքը սկզբից ասել ա, որ էս գազով՝ հելիումով պիտի փչվի, պիտի 2 մետր բարձրություն ունենա, որ վթար չլինի, իսկ վթարն էլ ինչի՞ց է տեղի ունեցելգ»,- ասել է Մ. Բոզոյանը: Հարցին, թե՝ այսինքն՝ պատվիրատուն ցանկացել է, որ Ս.Բոզոյանը մեթանո՞վ լիցքավորի փուչիկները, Մ. Բոզոյանը պատասխանել է. «Այո, որպեսզի գումարը քիչ լինի, որովհետև հելիումովը թանկ է»: Մ. Բոզոյանի խոսքով՝ իր ամուսինը վախենում է ճշմարտությունն ասել, այնինչ՝ ասելիք ունի. «Ճիշտն ասած, էսօր ես իրեն խոսեցրի, ասացի՝ ճիշտն ասա, դու մի բան գիտես ու չես ասում: Ինքն ասաց՝ պետք չի, որ ճիշտը պատմեմ»:

«168 ԺԱՄ»

http://168.am/2012/10/20/137584.html